ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

— փետրվարի 2025 թվականի № -Ա

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔՆ ԱՌԱՆՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա՝ մինչև 2031 թվականի դեկտեմբերի 31-ը գործողության ժամկետով, իսկ Որոշման հավելվածով հաստատվել են տրամադրված լիցենզիայի պայմանները: Որոշումն ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 1-ից և անբողոքարկելի է դարձել 2018 թվականի հունվարի 2-ից,

2) Ընկերությունը 2025 թվականի հունվարի 24-ի №ՄՇ/2096 գրությամբ դիմում է ներկայացրել Հանձնաժողով՝ Որոշմամբ հաստատված՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ԼՋ №0001 լիցենզիայի պայմանների 11-րդ կետն առ ոչինչ ճանաչելու, ինչպես նաև որպես դրա հետևանք՝ Հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 19-ի №124Ա, հունիսի 23-ի №248Ա, օգոստոսի 11-ի №301Ա և դեկտեմբերի 8-ի №434Ա որոշումներն առ ոչինչ ճանաչելու վերաբերյալ,

3) Հանձնաժողովի կողմից 2025 թվականի հունվարի 24-ից հարուցվել է Ընկերության վարչական բողոքի քննարկման վարչական վարույթ, ինչի վերաբերյալ վերջինիս ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 30-ի №ՄՄ/34.1-Մ2-7/426-2025 գրությամբ,

4) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 71-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ վարչական բողոքը կարող է բերվել գրավոր վարչական ակտում դրա բողոքարկման ժամկետը նշված չլինելու դեպքում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում,

5) Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բողոքարկման ժամկետները բաց թողնելուց հետո ակտը դառնում է անբողոքարկելի, իսկ բողոքարկման ժամկետը լրանալուց մեկ տարի անցնելուց հետո վարույթի մասնակիցը կորցնում է բողոքարկման ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու հիմնավորմամբ բողոք բերելու իրավունքը, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոք բերելու ժամկետը բաց թողնելը կապված է անհաղթահարելի ուժի առաջացրած հետևանքների հետ,

6) Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում,

7) Օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը բողոքն ընդունելիս պարտավոր է ստուգել բողոքի համապատասխանությունը Օրենքի 70-րդ հոդվածի պահանջներին և պարզել՝ արդյոք բողոքը բերվել է Օրենքի 71-րդ հոդվածով սահմանված ժամկետում,

8) Օրենքի 73-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելիս բողոքը թողնվում է առանց քննարկման, եթե դա ներկայացված է Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, և ժամկետը բաց թողնելը, Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, հարգելի չի ճանաչվել,

9) Բողոքի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ Ընկերության կողմից Որոշման դեմ բողոք ներկայացվել է 2025 թվականի հունվարի 24-ին՝ Օրենքով սահմանված բողոքարկման ժամկետը լրանալուց հետո, և Ընկերությունը չի հիմնավորել անհաղթահարելի ուժի հետևանքով ժամկետը բաց թողնված լինելը, և

հիմք ընդունելով Օրենքի 73-րդ հոդվածի 3-րդ մասը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերության 2025 թվականի հունվարի 24-ի №ՄՇ/2096 գրությամբ ներկայացված՝ Որոշմամբ հաստատված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ԼՋ №0001 լիցենզիայի պայմանների 11-րդ կետն առ ոչինչ ճանաչելու, ինչպես նաև որպես դրա հետևանք՝ Հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 19-ի №124Ա, հունիսի 23-ի №248Ա, օգոստոսի 11-ի №301Ա և դեկտեմբերի 8-ի №434Ա որոշումներն առ ոչինչ ճանաչելու վերաբերյալ վարչական բողոքը թողնել առանց քննարկման:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
— փետրվարի 2025թ.